ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀԿԳՄՍՆՀՄԱԾՁԲ-25/7

ք. Երևան «22» 08 2025թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Հասմիկ Հակոբյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Սան պրինտ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Սերգեյ Վարդանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայության («Լավ սովորիր, որ լավ ապրես» կարգախոսի տպագրման ծառայություն)** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

1.3 Պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև պայմանագիրն ուժի մեջ մտնելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը, իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 3087300 (երեք միլիոն ութսունյոթ հազար երեք հարյուր) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.7 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.8 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.9 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **9** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1 և N 2 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Սան պրինտ» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3	Հասցեն՝ ք. Երևան,.Գրիբոյեդով 60/4, 1-ին հարկ
Կառավարական տուն 2,	Հեռ.՝ (+374) 96-47-74-67, 96-47-74-88
ՀՀ ֆինանսների նախարարության	էլ. Փոստ՝ info@sunprint.am
գործառնական վարչություն	«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ,
Հ/Հ 900011005122	Հ/Հ 220453331062000,
ՀՎՀՀ 02698732	ՀՎՀՀ 00165812

Գլխավոր քարտուղար՝

_____ **Հ. Հակոբյան**

(ստորագրություն)

Կ.Տ.

Տնօրեն՝

_____ **Ս. Վարդանյան**

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 1
«22» 08 2025 թ. կնքված
«ՀՀԿԳՄՍՀՄԱԾՁԲ-25/7» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ծառայության

Հ/Հ	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	Քանակը	Ընդամենը գինը, ՀՀ դրամ	Մատուցման	
							Հասցեն	Ժամկետը
1	79821200/64	**Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն**	Ծառայությունը նախատեսում է կարգախոսի տպագրություն՝ **համաձայն կցվող նկարի:** Կարգախոս՝ «Լավ սովորիր, որ լավ ապրես» Տպաքանակը՝ 87 օրինակ: Չափը՝ 2000 մմ x 1200 մմ: Տպագրությունը՝ ՊՎՔ, 5 մմ: Տպագրության որակի բնութագրիչը՝ 1440 dpi: Մատակարարումը և տեղադրումը ՀՀ ուսումնական հաստատություններ իրականացվում է Կատարողի կողմից՝ համաձայն բաշխման ցուցակի: Նմուշը անհրաժեշտ է նախապես համաձայնեցնել Պատվիրատուի հետ: 	**դրամ**	**1**	**3087300**	Համաձայն բաշխման ցուցակի	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո 5-րդ օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնվում է ապրանքը մատակարարել և տեղադրել ավելի կարճ ժամկետում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

_____ Հ. Հակոբյան
(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

_____ Ս. Վարդանյան
(ստորագրություն)

Կ.Տ

ԲԱՇԽՄԱՆ ՑՈՒՑԱԿ
«Լավ սովորիր, որ լավ ապրես» կարգախոսի

հ/հ	Մարզը	Հասցեն	Քանակը
1.	ՀՀ Արագածոտնի մարզ	«Օհանավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	1
2.	ՀՀ Արագածոտնի մարզ	«Արագածավանի թիվ 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	1
3.	ՀՀ Արագածոտնի մարզ	«Սասունիկ գյուղի միջնակարգ դպրոց»	1
4.	ՀՀ Արագածոտնի մարզ	«Լուսակնի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	1
5.	ՀՀ Արագածոտնի մարզ	Գառնահովիտի միջնակարգ դպրոց	1
6.	ՀՀ Արարատի մարզ	«Մասիսի թիվ 5 ավագ դպրոց» ՊՈԱԿ	1
7.	ՀՀ Արարատի մարզ	«Դեղձուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	1
8.	ՀՀ Արարատի մարզ	«Փոքր Վեդու միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	1
9.	ՀՀ Արարատի մարզ	«Հայանիստի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	1
10.	ՀՀ Արարատի մարզ	«Հովտաշատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	1
11.	ՀՀ Արարատի մարզ	«Վանաշեն գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	1
12.	ՀՀ Արարատի մարզ	«Պարույր Սևակի կրթահամալիր» ՊՈԱԿ	1
13.	ՀՀ Արարատի մարզ	«Արտաշատի ավագ դպրոց» ՊՈԱԿ	1
14.	ՀՀ Արարատի մարզ	«Հնաբերդ համայնքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	1
15.	ՀՀ Արարատի մարզ	«Վարդաշեն համայնքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	1
16.	ՀՀ Արմավիրի մարզ	«Վաղարշապատի Մ. Գորկու անվան N 5 ավագ դպրոց ՊՈԱԿ	1
17.	ՀՀ Արմավիրի մարզ	«Արգինայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	1
18.	ՀՀ Արմավիրի մարզ	«Պտղունքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	1
19.	ՀՀ Արմավիրի մարզ	«Փարաքարի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	1
20.	ՀՀ Արմավիրի մարզ	«Մրգաշատի թիվ 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	1
21.	ՀՀ Արմավիրի մարզ	«Երասխահունի կրթահամալիր» ՊՈԱԿ	1
22.	ՀՀ Արմավիրի մարզ	«Այգեկի Մուշեղ Մովսիսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	1
23.	ՀՀ Գեղարքունիքի մարզ	«Ձոլաքար գյուղի Ա. Վարդանյանի անվան N2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	1
24.	ՀՀ Գեղարքունիքի մարզ	«Սևանի Խ. Աբովյանի անվան ավագ դպրոց» ՊՈԱԿ	1
25.	ՀՀ Գեղարքունիքի մարզ	«Ջիլի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	1
26.	ՀՀ Գեղարքունիքի մարզ	«Մադինայի կրթահամալիր» ՊՈԱԿ	1
27.	ՀՀ Գեղարքունիքի մարզ	«Լեռնահովիտի Վ.Բարեղամյանի անվան հիմնական դպրոց» ՊՈԱԿ	1
28.	ՀՀ Գեղարքունիքի մարզ	«Վաղաշեն համայնքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	1
29.	Ք. Երևան	«Երևանի Տ. Շևչենկոյի անվան N 42 ավագ դպրոց» ՊՈԱԿ	1
30.	Ք. Երևան	«Երևանի Հայկական Մանկավարժական Համալսարանի հենակետային ավագ դպրոց վարժարան» ՊՈԱԿ	1
31.	Ք. Երևան	«Երևանի Ա. Ղարիբյանի անվան N 142 ավագ դպրոց» ՊՈԱԿ	1
32.	Ք. Երևան	«Երևանի Մ. Խորենացու անվան հ. 143 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	1
33.	Ք. Երևան	«Երևանի թիվ 111 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	1
34.	Ք. Երևան	«Երևանի թիվ 18 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	1
35.	Ք. Երևան	«Երևանի թիվ 116 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	1
36.	Ք. Երևան	«Երևանի թիվ 122 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	1
37.	Ք. Երևան	«Երևանի թիվ 6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	1

38.	Ք. Երևան	«Վ.Պետրոսյանի անվան թիվ 51 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	1
39.	Ք. Երևան	«Երևանի թիվ 95 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	1
40.	Ք. Երևան	«Հերացի ավագ դպրոց» ՊՈԱԿ	1
41.	Ք. Երևան	«Գ.Ստեփանյանի անվան թիվ 135 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	1
42.	Ք. Երևան	«Երևանի Հ.Կոջոյանի անվան թիվ 15 կրթահամալիր» ՊՈԱԿ	1
43.	ՀՀ Լոռու մարզ	«Ալավերդու Ստ. Շահումյանի անվան թիվ 5 ավագ դպրոց» ՊՈԱԿ	1
44.	ՀՀ Լոռու մարզ	«Հագվու հիմնական դպրոց» ՊՈԱԿ	1
45.	ՀՀ Լոռու մարզ	«Մեդովկայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	1
46.	ՀՀ Լոռու մարզ	«Ստեփանավանի թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	1
47.	ՀՀ Լոռու մարզ	«Վանաձորի թիվ 19 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	1
48.	ՀՀ Լոռու մարզ	«Դեբեդի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	1
49.	ՀՀ Լոռու մարզ	«Ստեփանավան քաղաքի թիվ 1 դպրոց» ՊՈԱԿ	1
50.	ՀՀ Լոռու մարզ	«Վանաձոր քաղաքի թիվ 8 դպրոց» ՊՈԱԿ	1
51.	ՀՀ Լոռու մարզ	Լոռու մարզի Վանաձորի թիվ 9 դպրոց	1
52.	ՀՀ Լոռու մարզ	«Վանաձոր համայնքի գ. Ագարակի դպրոց» ՊՈԱԿ	1
53.	ՀՀ Լոռու մարզ	«Ստեփանավանի թիվ 2 դպրոց» ՊՈԱԿ	1
54.	ՀՀ Լոռու մարզ	«Վանաձորի թիվ 23 դպրոց» ՊՈԱԿ	1
55.	ՀՀ Կոտայքի մարզ	«Ջրառատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	1
56.	ՀՀ Կոտայքի մարզ	«Կաթնաղբյուրի հիմնական դպրոց» ՊՈԱԿ	1
57.	ՀՀ Կոտայքի մարզ	«Աբովյանի թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	1
58.	ՀՀ Կոտայքի մարզ	«Հրազդանի թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	1
59.	ՀՀ Շիրակի մարզ	«Գյումրու թիվ 27 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	1
60.	ՀՀ Շիրակի մարզ	«Արթիկ քաղաքի թիվ 3 ավագ դպրոց» ՊՈԱԿ	1
61.	ՀՀ Շիրակի մարզ	«Գյումրու Ակադեմիական վարժարան» ՊՈԱԿ	1
62.	ՀՀ Շիրակի մարզ	«Կապսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	1
63.	ՀՀ Շիրակի մարզ	«Արեգնադեմի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	1
64.	ՀՀ Շիրակի մարզ	«Քեթիի կրթահամալիր» ՊՈԱԿ	1
65.	ՀՀ Շիրակի մարզ	«Գյումրու թիվ 32 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	1
66.	ՀՀ Շիրակի մարզ	«Գյումրի քաղաքի թիվ 38 դպրոց» ՊՈԱԿ	1
67.	ՀՀ Շիրակի մարզ	«Գյումրի քաղաքի թիվ 41 դպրոց» ՊՈԱԿ	1
68.	ՀՀ Շիրակի մարզ	«Գյումրի քաղաքի թիվ 28 դպրոց» ՊՈԱԿ	1
69.	ՀՀ Շիրակի մարզ	«Փանիկի դպրոց» ՊՈԱԿ	1
70.	ՀՀ Շիրակի մարզ	«Ախուրյանի թիվ 2 դպրոց» ՊՈԱԿ	1
71.	ՀՀ Շիրակի մարզ	«Գյումրու թիվ 11 դպրոց» ՊՈԱԿ	1
72.	ՀՀ Շիրակի մարզ	«Գյումրու թիվ 20 դպրոց» ՊՈԱԿ	1
73.	ՀՀ Շիրակի մարզ	«Գյումրու թիվ 23 դպրոց» ՊՈԱԿ	1
74.	ՀՀ Սյունիքի մարզ	«Գորիսի քաղաքի Ա. Բակունցի անվան թիվ 1 ավագ դպրոց» ՊՈԱԿ	1
75.	ՀՀ Սյունիքի մարզ	«Վաղատինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	1
76.	ՀՀ Սյունիքի մարզ	«Կապանի Անդրանիկ Մարգարյանի անվան թիվ 7 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	1
77.	ՀՀ Սյունիքի մարզ	«Հարժիսի Համլետ Մինասյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	1
78.	ՀՀ Սյունիքի մարզ	«Դարբասի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	1

79.	ՀՀ Վայոց ձորի մարզ	«Եղեգիսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	1
80.	ՀՀ Վայոց ձորի մարզ	«Գոմքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	1
81.	ՀՀ Վայոց ձորի մարզ	«Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ	1
82.	ՀՀ Վայոց ձորի մարզ	«Չիվայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	1
83.	ՀՀ Տավուշի մարզ	«Կիրանցի Գագիկ Վարդանյանի անվան հիմնական դպրոց» ՊՈԱԿ	1
84.	ՀՀ Տավուշի մարզ	«Գանձաքարի միջնակարգ դպրոց»	1
85.	ՀՀ Տավուշի մարզ	«Լուսաձորի կրթահամալիր» ՊՈԱԿ	1
86.	ՀՀ Տավուշի մարզ	«Բերդ համայնքի ավագ դպրոց» ՊՈԱԿ	1
87.	ՀՀ Տավուշի մարզ	«Կայան համայնքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	1
Ընդամենը			**87**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

---------- **Հ. Հակոբյան**
(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

---------- **Ս. Վարդանյան**
(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված N 2
«22» 08 2025 թ. կնքված
«ՀՀԿԳՄՍՆՀՄԱԾՁԲ-25/7» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
Չափաբաժին	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ ըստ ամիսների, այդ թվում՝											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	79821200/64	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն	0	0	0	0	0	0	0	3087300	3087300	3087300	3087300	3087300	3087300

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

---------- Հ. Հակոբյան
(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

---------- Ս. Վարդանյան
(ստորագրություն)

Կ.Տ